# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<22>> 06 2015թ. N: 31 ք.Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի երկրորդ մասով։

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2015 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի թվով 4՝ <<Սառնաղբյուրի առողջության կենտրոն>>, <<Մեծ Մանթաշի առողջության կենտրոն>>, <<Գյումրու Սամարիթեր վերականգնողական կենտրոն>> և <<Գյումրու հոգեկան առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություններում անցկացնել համակագի գնահատման աուդիտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Բարսեղ Քոչարյանի, Արտակ Հայրապետյանի, Մուշեղ Մուրադյանի և առաջատար մասնագետ Սերգեյ Պասկևիչյանի կողմից
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Մ. Բզնունուն՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել համակարգի գնահատման աուդիտի անցկացվող փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին և հաշվապահներին։

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Մ. Բզնունուն՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքները իրականացնել 18 աշխատանքային օրվա ընթացքում:
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ. Մարտիրոսյանին՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարում:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Մ. Բզնունուն:
6. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է: